

ԵՐԵՎԱՆԻ ՊԵՏԱԿԱՆ ՀԱՄԱԼՍԱՐԱՆ
ՊԱՏՄՈՒԹՅԱՆ ՖԱԿՈՒԼՏԵՏ

ЕРЕВАНСКИЙ ГОСУДАРСТВЕННЫЙ УНИВЕРСИТЕТ
ИСТОРИЧЕСКИЙ ФАКУЛЬТЕТ

YEREVAN STATE UNIVERSITY
FACULTY OF HISTORY

ՊԱՏՄՈՒԹՅՈՒՆ ԵՎ ՄՇԱԿՈՒՅԹ
ՀԱՅԱԳԻՏԱԿԱՆ ՀԱՆԴԵՍ

ИСТОРИЯ И КУЛЬТУРА
АРМЕНОВЕДЧЕСКИЙ ЖУРНАЛ

HISTORY AND CULTURE
JOURNAL OF ARMENIAN STUDIES

№ 2

ԵՐԵՎԱՆ - ԵՐԵՎԱՆ - YEREVAN
ԵՊՀ ՀՐԱՏԱՐԱԿՉՈՒԹՅՈՒՆ, ИЗДАТЕЛЬСТВО ЕГУ, YSU PRESS
2020

**Հրատարակվում է Երևանի պետական համալսարանի
Պատմության ֆակուլտետի գիտական խորհրդի որոշմամբ**

Գլխավոր խմբագիր՝ պ.գ.դ., պրոֆ. **Էդիկ Մինասյան**
խմբագրական խորհուրդ՝

Արման Եղիազարյան (խմբագիր, պ.գ.դ., պրոֆ.), **Արամ Սիմոնյան** (ԵՊՀ Հայագիտական հետազոտությունների ինստիտուտի տնօրեն, ՀՀ ԳԱԱ թղթ. անդամ, պ.գ.դ., պրոֆ.), **Աշոտ Մելքոնյան** (ՀՀ ԳԱԱ ակադեմիկոս, պ.գ.դ., պրոֆ.), **Ալբերտ Ստեփանյան** (պ.գ.դ., պրոֆ.), **Հայկ Ավետիսյան** (պ.գ.դ., պրոֆ.), **Հայրապետ Մարգարյան** (պ.գ.դ., պրոֆ.), **Լևոն Զուգասյան** (արվեստագիտ. դոկտ., պրոֆ.), **Համլետ Պետրոսյան** (պ.գ.դ., պրոֆ.), **Հայկազ Հովհաննիսյան** (պ.գ.դ., պրոֆ.), **Աշոտ Ներսիսյան** (պ.գ.դ., պրոֆ.), **Աշոտ Հայրունի** (պ.գ.դ., պրոֆ.), **Վալերի Թունյան** (պ.գ.դ., պրոֆ.), **Վանիկ Վիրաբյան** (պ.գ.դ., պրոֆ.), **Ռաֆիկ Նահապետյան** (պ.գ.դ., պրոֆ.), **Հակոբ Հարությունյան** (պ.գ.դ., դոց.), **Հովիկ Գրիգորյան** (պ.գ.թ., դոց.), **Մխիթար Գաբրիելյան** (պ.գ.թ., դոց.), **Էդգար Հովհաննիսյան** (պ.գ.թ., դոց.), **Տիգրան Գևորգյան** (պ.գ.թ.):

Главный редактор - докт. ист. наук, проф. **Эдик Минасян**
Редакционная коллегия:

Арман Егиазарян (редактор, д.и.н., проф.), **Арам Симонян** (директор Института Арменологических исследований ЕГУ, членкор. АН РА, д.и.н., проф.), **Ашот Мелконян** (академик АН РА, д.и.н., проф.), **Альберт Степанян** (д.и.н., проф.), **Айк Аветисян** (д.и.н., проф.), **Айрапет Маргарян** (д.и.н., проф.), **Левон Чугасзян** (докт. искусствовед. наук, проф.), **Гамлет Петросян** (д.и.н., проф.), **Айказ Оганесян** (д.и.н., проф.), **Ашот Нерсисян** (д.и.н., проф.), **Ашот Айруни** (д.и.н., проф.), **Валерий Тунян** (д.и.н., проф.), **Ваник Вирабян** (д.и.н., проф.), **Рафик Напетян** (д.и.н., проф.), **Акоб Арутюнян** (д.и.н., доц.), **Овик Григорян** (к.и.н., доц.), **Мхитар Габриелян** (к.и.н., доц.), **Эдгар Оганнисян** (к.и.н., доц.), **Тигран Геворгян** (к.и.н.).

Editor-in-Chief - Doctor of Sciences, prof. **Edik Minasyan**
Editorial Board:

Arman Yeghiazaryan (editor, Doctor of Sciences, prof.), **Aram Simonyan** (Director of YSU Institute for Armenian Studies, Corresp. member of NAS RA, Doctor of Sciences, prof.), **Ashot Melkonyan** (Academician of NAS RA, Doctor of Sciences, prof.), **Albert Stepanyan** (Doctor of Sciences, prof.), **Hayk Avetisyan** (Doctor of Sciences, prof.), **Hairapet Margaryan** (Doctor of Sciences, prof.), **Levon Chugaszyan** (Doctor of Arts, prof.), **Hamlet Petrosyan** (Doctor of Sciences, prof.), **Haikaz Hovhannisyan** (Doctor of Sciences, prof.), **Ashot Nersisyan** (Doctor of Sciences, prof.), **Asot Hayruni** (Doctor of Sciences, prof.), **Valeri Tunyan** (Doctor of Sciences, prof.), **Vanik Virabyan** (Doctor of Sciences, prof.), **Rafik Nahapetyan** (Doctor of Sciences, prof.), **Hakob Harutunyan** (Doctor of Sciences, associate prof.), **Hovik Grigoryan** (PhD in History, associate prof.), **Mkhitar Gabrielyan** (PhD in History, associate prof.), **Edgar Hovhannisyan** (PhD in History, associate prof.), **Tigran Gevorgyan** (PhD in History).

ISSN 1829-2771

ԲՈՎԱՆԴԱԿՈՒԹՅՈՒՆ
СОДЕРЖАНИЕ / CONTENT

ՊԱՏՄՈՒԹՅՈՒՆ / ИСТОРИЯ / HISTORY

Սեյրան Չաքարյան - ԳՐԻԳՈՐ ՏԱԹԵՎԱՅՈՒ ՓԻԼԻՍՈՓԱՅՈՒԹՅԱՆ ԱԿՈՒՆՔՆԵՐԸ, ԳԱՂԱՓԱՐՆԵՐԸ ԵՎ ԻՄԱՍՏԱՍԻՐՄԱՆ ԵՂԱՆԱԿԻ ՅՈՒՐԱՀԱՏԿՈՒԹՅՈՒՆՆԵՐԸ.....	8
Сейран Закарян - ИСТОЧНИКИ ФИЛОСОФИИ ГРИГОРА ТАТЕВАЦИ, ЕГО ИДЕИ И СПЕЦИФИКА ЕГО СПОСОБА ФИЛОСОФСТВОВАНИЯ.....	16
Seyran Zakaryan - GRIGOR TATEVATSI'S PHILOSOPHICAL SOURCES, IDEAS AND PECULIARITIES OF THE WAY OF PHILOSOPHIZING.....	17
Հասմիկ Ամիրջանյան - ՂՈՒԿԱՍ ԿԱՐՆԵՅՈՒ ԳՈՐԾՈՒՆԵՈՒԹՅՈՒՆԸ ՀՈԳԵԿՈՐ-ՎԱՐՉԱԿԱՆ ԿՅԱՆՔԻ ԿԱՆՈՆԱԿԱՐԳՄԱՆ ԲՆԱԳԱՎԱՌՈՒՄ.....	19
Асмик Амирджанян - ДУХОВНО-АДМИНИСТРАТИВНАЯ ДЕЯТЕЛЬНОСТЬ ГУКАСА КАРНЕЦИ.....	27
Hasmik Amirjanyan - ADMINISTRATIVE-SPIRITUAL ACTIVITIES OF GHUKAS KARNETSI.....	28
Վարդան Միսիրջանյան, Գոհար Ղամբարյան - ՏԵՂԵԿԱՏՎԱԿԱՆ ՊԱՏԵՐԱԶՄ. ՍԵՎԱՆԼԱ ԼՅԻ ԱՎԱԶԱՆԻ ԲՆԱԿԱՎԱՅՐԵՐԸ XIX ԴԱՐԻ 30-ԱՎԱՆՆԵՐԻՆ.....	29
Вардан Мхитарян, Гохар Гамбарян - ИНФОРМАЦИОННАЯ ВОЙНА: НАСЕЛЕННЫЕ ПУНКТЫ БАСЕЙНА ОЗЕРА СЕВАН В 30-Х ГОДАХ XIX ВЕКА.....	39
Vardan Mkhitaryan, Gohar Ghambaryan - INFORMATION WAR: SETTLEMENTS OF THE LAKE SEVAN BASIN IN THE 30s of XIX.....	39
Լիլիթ Մակարյան - ԱՊԱՐԱՆԻ ՎԱՐԴԵՆԻՍ ԳՅՈՒՂԻ ՎԵՐԱԲՆԱԿԵՑՄԱՆ ԵՎ ՏԵՂԻ ԵՎԵՂԵՑԻՆԵՐԻ ԱՆՎԱՆ ԵՃՉԳՐՏՄԱՆ ՀԱՐՑԵՐԻ ՇՈՒՐԶ.....	45
Лилит Макарян - К ВОПРОСУ О ПЕРЕСЕЛЕНИИ СЕЛА ВАРДЕНИС АПАРАНА И УТОЧНЕНИИ НАЗВАНИЙ МЕСТНЫХ ЦЕРКВЕЙ.....	49
Lilit Makaryan - ON RESETTLEMENT ISSUE OF VARDENIS VILLAGE OF APARAN AND NAME CLARIFICATION OF LOCAL CHURCHES.....	49
Ֆելիքս Մովսիսյան - ՌՈՒՄԱՀԱՅ ՊԱՐԲԵՐԱԿԱՆ ՄԱՍՈՒԼԸ XIX ԴԱՐԻ ԻՏԱԼԱԿԱՆ ԱԶԳԱՅԻՆ-ԱԶԱՏԱԳՐԱԿԱՆ ՊԱՅՔԱՐԻ ՄԱՍԻՆ.....	50
Феликс Мовсисян - ПЕРИОДИЧЕСКАЯ ПЕЧАТЬ РОССИЙСКИХ АРМЯН ОБ ИТАЛЬЯНСКОЙ НАЦИОНАЛЬНО-ОСВОБОДИТЕЛЬНОЙ БОРЬБЕ XIX ВЕКА.....	66
Felix Movsisyan - ARMENIAN PERIODICALS OF RUSSIA ON THE 19TH CENTURY NATIONAL STRUGGLE OF ITALY.....	67
Սուսաննա Առաքելյան - ԲԱՔԿԻ ՀԱՅՈՑ ՄԱՐԴԱՍԻՐԱԿԱՆ ԸՆԿԵՐՈՒԹՅԱՆ ԿՐԹԱԿԱՆ-ԼՈՒՄԱՎՈՐԱԿԱՆ ԵՎ ԴՊՐՈՑԱՍՏԵՂԾ ԳՈՐԾՈՒՆԵՈՒԹՅՈՒՆԸ 1864-1896 ԹԹ.....	69

Сусанна Аракелян – ОБРАЗОВАТЕЛЬНО-ПРОСВЕТИТЕЛЬСКАЯ ДЕЯТЕЛЬНОСТЬ АРМЯНСКОГО ГУМАНИТАРНОГО ОБЩЕСТВА БАКУ И СТРОИТЕЛЬСТВО ШКОЛ В 1864-1896.	87
Susanna Arakelyan – EDUCATIONAL AND SCHOOL-BUILDING ACTIVITIES OF ARMENIAN HUMANITARIAN SOCIETY OF BAKU IN 1864-1896.	87
Գեղամ Բաղայան – ԱՐԵՎՄՏՅԱՆ ՀԱՅԱՍՏԱՆԻ ՊԱՏՄԱԺՈՂՈՎՐԴԱԿԱՆ ՆԿԱՐԱԳԻՐԸ ՄԵԾ ԵՂԵՌՆԻ ՆԱԽՕՐԵԻՆ [Սևերակի, Ջերմուկի, Միդիատի, Մծբինի (Նիսիբին) և Վերանշեհիրի գավառները].....	88
Гегам Бадалян – ИСТОРИКО-НАРОДНОЕ ОПИСАНИЕ ЗАПАДНОЙ АРМЕНИИ НАКАНУНЕ ГЕНОЦИДА АРМЯН (Северакский, Джермукский, Мидиатский, Мцбинский (Нисибинский) и Вераншехирский уезды).	115
Gegham Badalyan – HISTORICAL-NATIONAL DESCRIPTION OF WESTERN ARMENIA ON THE EVE OF THE ARMENIAN GENOCIDE (provinces Severak, Jermuk, Midiat, Mtsbin (Nisibin) and Veranshehir).	115
Աննա Վարդանյան – ԴԻԱՆԱ ԱԲԳԱՐ. ՀԱՅ-ԵԱՊՈՆԱԿԱՆ ՊԱՏՄԱՇԱԿՈՒԹՅՈՒՆ ՀԱՐԱԲԵՐՈՒԹՅՈՒՆՆԵՐԻ ԱԿՈՒՆՔՆԵՐԸ	117
Анна Варданян – ДИАНА АБГАР - «МАТЬ АРМЕНИИ НА ДАЛЬНЕМ ВОСТОКЕ»: ЖИЗНЬ И ДЕЯТЕЛЬНОСТЬ. ПО СЛЕДАМ ИСТОКОВ АРМЯНО-ЯПОНСКИХ ИСТОРИКО-КУЛЬТУРНЫХ ОТНОШЕНИЙ.	123
Anna Vardanyan – DIANA ABGAR - “MOTHER OF ARMENIA IN THE FAR EAST”: LIFE AND ACTIVITIES. TRACING BACK TO ARMENIAN-JAPANESE HISTORICAL AND CULTURAL RELATIONS.	124
Գայանե Հովհաննիսյան – ԼԵՌՆԱՅԻՆ ՂԱՐԱԲԱՂԻ ԻՆՔՆԱԿԱՐ ՄԱՐԶԻ ԲՆԱԿՉՈՒԹՅՈՒՆԸ ԸՍՏ 1926 Թ. ՀԱՄԱՄԻՈՒԹԵՆԱԿԱՆ ՄԱՐԴԱՀԱՄԱՐԻ ՏՎՅԱԼՆԵՐԻ	125
Гаяне Оганнисян – НАСЕЛЕНИЕ НАГОРНО-КАРАБАХСКОЙ АВТОНОМНОЙ ОБЛАСТИ ПО ВСЕСОЮЗНОЙ ПЕРЕПИСИ 1926 г.	132
Gayane Hovhannisyan – POPULATION OF THE NAGORNO-KARABAKH AUTONOMOUS REGION ACCORDING TO THE ALL-UNION CENSUS (1926).	133
Արտակ Խաչատրյան – ԲՈԼՇԵՎԻԿՅԱՆ ԿՈՒՍԱԿՑՈՒԹՅԱՆ ՄՈՏԵՑՈՒՄՆԵՐԸ ԱԶԳԱՅԻՆ ՀԱՐՑԻՆ ՆԱԽԱԽՈՐՀՐԴԱՅԻՆ ՇՐՋԱՆՈՒՄ.....	134
Артак Хачатрян – НАЦИОНАЛЬНЫЙ ВОПРОС В ВОСПРИЯТИИ БОЛЬШЕВИСТСКОЙ ПАРТИИ В ДОСОВЕТСКИЙ ПЕРИОД (1903-1917 гг.).....	141
Artak Khachatryan – NATIONAL ISSUE IN THE PERCEPTIONS OF THE BOLSHEVIK PARTY IN THE PRE-SOVIET PERIOD (1903-1917).	141
Մանյակ Երանոսյան – ՀԱԿՈԲ ԶԱՎՐԻՅԱՆԻ ԳՈՐԾՈՒՆԵՈՒԹՅՈՒՆԸ ԵՐԶՐՈՒՄՈՒՄ (1916 Թ. ՀՈՒԼԻՍ-ՍԵՊՏԵՄԲԵՐ)	142
Маняк Ераносян – ДЕЯТЕЛЬНОСТЬ ЯКОВА ЗАВРИЯНА В ЭРЗРУМЕ (ИЮЛЬ-СЕНТЯБРЬ 1916 Г.).....	149
Manyak Yeranosyan – НАКОВ ZAVRIYAN'S ACTIVITIES IN ERZRUM (1916 JULY-SEPTEMBER).	150

Գևորգ Կեսոյան – ԻՐԱԴՐՈՒԹՅՈՒՆԸ ԹՈՒՐԹԻՎ – ԽՈՐՀՐԴԱՅԻՆ ՀԱՅԱՍՏԱՆ ՍԱՀՄԱՆԻՆ ՀԱՅՐԵՆԱԿԱՆ ՄԵԾ ՊԱՏԵՐԱԶՄԻ ՏԱՐԻՆԵՐԻՆ.....	151
Геворг Кесоян – СИТУАЦИЯ НА ГРАНИЦЕ ТУРЦИЯ-СОВЕТСКАЯ АРМЕНИЯ В ГОДЫ ВЕЛИКОЙ ОТЕЧЕСТВЕННОЙ ВОЙНЫ.....	159
Gevorg Kesoyan – THE SITUATION ON THE TURKISH-SOVIET ARMENIAN BORDER DURING THE GREAT PATRIOTIC WAR.....	160
Արման Սաֆարյան – ՀԱՅ ՀՐԱՊԱՐԱԿԱԽՈՍՈՒԹՅԱՆ ԱՎԱՆ-ԴՈՒՅԹՆԵՐԻ ԴԵՐԸ՝ ՄՈՒՆԻՏԻՄԵՆՏԻՎԱԿԱՆ ՀԱՐԹԱԿՆԵՐՈՒՄ ԲԱՎ-ՊԱՀՊԱՆԱԿԱՆ ՀԻՄՆԱՀԱՐՅԵՐԻ ԼՈՒՍԱԲԱՆՄԱՆ ԳՈՐԾԸՆԹԱՑՈՒՄ.....	161
Арман Сафарян – РОЛЬ ТРАДИЦИЙ АРМЯНСКОЙ ПУБЛИЦИСТИКИ В ПРОЦЕССЕ ОСВЕЩЕНИЯ ЭКОЛОГИЧЕСКОЙ ПРОБЛЕМАТИКИ В МУЛЬТИМЕДИЙНОМ ПРОСТРАНСТВЕ.....	164
Arman Safaryan – THE ROLE OF ARMENIAN OPINION JOURNALISM IN THE COVERAGE OF ECOLOGICAL ISSUES IN MULTIMEDIA.....	165
Սարգիս Սկրտչեան – ՊԱՆԹԻՐՔԱԿԱՆ ԿԱԶՄԱԿԵՐՊՈՒԹԻՒՆՆԵՐԻ ԳՈՐԾՈՒՆԵՈՒԹԻՒՆԸ ԻՐԱՆՈՒՄ 20-ՐԴ ԴԱՐԻ ԿԵՐՉԵՐԻՆ - 21-ՐԴ ԴԱՐԻ ՍԿԶԲԵՐԻՆ.....	166
Саргис Мкртчян – ДЕЯТЕЛЬНОСТЬ ПАНТЮРКИСТСКИХ ОРГАНИЗАЦИЙ В ИРАНЕ В КОНЦЕ XX – НАЧАЛЕ XXI ВЕКОВ.....	174
Sargis Mkrtchian – ACTIVITIES OF PAN-TURKISH ORGANIZATIONS IN IRAN AT THE END OF THE 20TH CENTURY - AT THE BEGINNING OF THE 21ST CENTURY.....	174
Սերի Նաջարյան, Հռիփսիմե Մուրադյան – ԳԵՐՄԱՆԻԱՅԻ ԴԻՐՔՈՐՈՇՈՒՄԸ ՀԱՅՈՑ ՑԵՂԱՍՊԱՆՈՒԹՅԱՆ ՄԻՋԱԶԳԱՅԻՆ ԵՎՆԱԶՍԱՆ ԳՈՐԾԸՆԹԱՑՈՒՄ (2001-2016թթ.).....	176
Мери Наджарян, Рипсима Мурадян – ПОЗИЦИЯ ГЕРМАНИИ В ВОПРОСЕ МЕЖДУНАРОДНОГО ПРИЗНАНИЯ ГЕНОЦИДА АРМЯН (2001-2016 ГГ.).....	183
Meri Najaryan, Hripsime Muradyan – GERMANY’S STAND ON THE ISSUE OF INTERNATIONAL RECOGNITION OF THE ARMENIAN GENOCIDE (2001-2016).....	184
ՊԱՏՄՈՒԹՅԱՆ ՏԵՍՈՒԹՅՈՒՆ / ТЕОРИЯ ИСТОРИИ / THEORY OF HISTORY	
Գևորգ Եաղարյան – ԱՆՑՅԱԼԻ ՊԱՏՄԱԿԱՆԱՑՄԱՆ ԵՎՆԱՊԱՐ-ՀԻՆ (ԹՈՄԱՍ ԶԱՐԼԱՅԼԸ ԵՎ ՆՐԱ «ԴԱՐՁԵԱԼ Ի ԿԵՐԱՅ ՊԱՏՄՈՒԹԵԱՆ» ՀՈՂԿԱԾԸ).....	185
Геворг Тшагарян – НА ПУТИ ИСТОРИЗАЦИИ ПРОШЛОГО (ТОМАС КАРЛЕЙЛЬ И ЕГО СТАТЬЯ «СНОВА ОБ ИСТОРИИ»).....	205
Gevorg Tshagharian – ON THE PATHWAY OF HISTORICIZATION OF THE PAST (THOMAS CARLYLE AND HIS ESSAY «ON HISTORY AGAIN»).....	206
Լիզա Քարիմյան – ՀԱՅ-ԲՅՈՒԶԱՆԴԱԿԱՆ «ԿՈՆՏԱԿՏԱՅԻՆ» ԳՈՏՈՒ Կ. ՀԱՐՈՒԹՅՈՒՆՈՎԱ-ՖԻԴԱՆՅԱՆԻ ՀԱՅԵՑԱԿԱՐԳԸ.....	207
Лиза Каримян – КОНЦЕПЦИЯ АРМЯНО-ВИЗАНТИЙСКОЙ “КОНТАКТНОЙ” ЗОНЫ В. АРУТЮНОВОЙ-ФИДАНЯН.....	216

Liza Karimyan - V. ARUTYUNOVA-FIDANYAN'S CONCEPT OF ARMENIAN-BYZANTINE "CONTACT" ZONE. 217

ՀԱՎԳԻՏՈՒԹՅՈՒՆ ԵՎ ԱԶԳԱԳՐՈՒԹՅՈՒՆ / АРХЕОЛОГИЯ И ЭТНОГРАФИЯ / ARCHAEOLOGY AND ETHNOGRAPHY

Ֆրինա Բաբայան - ՀՈՍՏՈՒՆ (ՈՍՏԱՆ) ՄԻՋՆԱԴԱՐՅԱՆ ԲՆԱԿԱՏԵՂԻԻ ՊԵՂՈՒՄՆԵՐԻ ԱՐԴՅՈՒՆՔՆԵՐԸ (2005-2006 ԹԹ.) 218

Фрина Бабаян - РЕЗУЛЬТАТЫ РАСКОПОК СРЕДНЕВЕКОВОГО ПОСЕЛЕНИЯ ХОСТУН (2005-2006 ГГ.) 222

Frina Babayan - RESULTS OF EXCAVATIONS AT THE MEDIEVAL SETTLEMENT OF HOSTUN (2005-2006 SEASONS) 223

Ռաֆիկ Նահապետյան - ԲՆԱԿԵՑՄԱՆ ԱՎԱՆԴԱԿԱՆ ՀԱՄԱԿԱՐԳԸ ՀԱՅՈՑ ՄԵՉ (XIX դ. - XX դ. սկիզբ) 228

Рафик Наапетян - ТРАДИЦИОННАЯ СИСТЕМА РАССЕЛЕНИЯ АРМЯН (XIX В. - НАЧАЛО XX В.) 235

Rafik Nahapetyan - THE TRADITIONAL SYSTEM OF SETTLEMENT OF ARMENIANS (XIX CENTURY - BEGINNING OF XX CENTURY) 235

ՍՓՅՈՒՌՔԱԳԻՏՈՒԹՅՈՒՆ / ДИАСПОРАВЕДЕНИЕ / DIASPORA STUDIES

Արման Եղիազարյան - ՀՅՂ-Ի ԳՈՐԾՈՒՆԵՈՒԹՅՈՒՆԸ ԳԱՂԹԱԿԱՅ-ՐԵՐՈՒՄ 1920-ԱԿԱՆ ԹԹ. ԵՎ ՀԱՄԱԳԱՂՈՒԹԱՅԻՆ ՀԱՄԱԳՈՒՄԱՐԻ ՀՐԱՎԻՐՄԱՆ ԽՆԴԻՐԸ 237

Арман Егиазарян - ДЕЯТЕЛЬНОСТЬ АРФ ДАШНАКЦУТЮН В ДИАСПОРЕ В 1920-Е ГОДЫ И ПРОБЛЕМА СОЗЫВА ОБЩЕДИАСПОРНОГО КОНГРЕССА 247

Arman Yeghiazaryan - ACTIVITIES OF ARF DASHNAKTSUTYUN IN DIASPORA IN THE 1920S AND THE PROBLEM OF CONVENING A DIASPORA CONGRESS 248

Հայկ Մարտիրոսյան - ՍՓՅՈՒՌՔԱՀԱՅՈՒԹՅԱՆ ՀԵՏ ՄՇԱԿՈՒԹԱՅԻՆ ԿԱՊԻ ԿՈՄԻՏԵԻ ՀԱՄԱԳՈՐԾԱԿՑՈՒԹՅՈՒՆԸ ԱՄՆ-Ի ՀԱՅ ՀԱՄԱՅՆՔԻ ՀԵՏ 249

Айк Мартиросян - СОТРУДНИЧЕСТВО КОМИТЕТА ПО КУЛЬТУРНЫМ СВЯЗЯМ С АРМЯНАМИ ДИАСПОРЫ С АРМЯНСКОЙ ОБЩИНОЙ США 257

Hayk Martirosyan - COOPERATION OF THE COMMITTEE OF THE CULTURAL RELATIONS WITH ARMENIANS OF DIASPORA WITH THE ARMENIAN COMMUNITY OF THE USA 257

Էդիկ Մինասյան - ՀԱՄԱՀԱՅՎԱԿԱՆ ՀԻՄՆԱԴՐԱՄՆԵՐԻ ԵՎ ՀԱՍԱՐԱԿԱԿԱՆ, ԲԱՐԵԳՈՐԾԱԿԱՆ ԿԱԶՄԱԿԵՐՊՈՒԹՅՈՒՆՆԵՐԻ ԳՈՐԾՈՒՆԵՈՒԹՅՈՒՆԸ ԱՐՑԱԽ-ՍՓՅՈՒՌՔ ԱՌՆՉՈՒԹՅՈՒՆՆԵՐԻ ԱՄՐԱԴՆԵՐՄԱՆ ՈՒՂՂՈՒԹՅԱՄԲ 21-ՐԴ ԴԱՐԻ ԱՌԱՋԻՆ ՏԱՄՆԱՍՅԱԿՆԵՐՈՒՄ 259

Эдик Минасян - ДЕЯТЕЛЬНОСТЬ ВСЕАРМЯНСКИХ ФОНДОВ, ОБЩЕСТВЕННЫХ И БЛАГОТВОРИТЕЛЬНЫХ ОРГАНИЗАЦИЙ ПО УКРЕПЛЕНИЮ ОТНОШЕНИЙ АРЦАХ-ДИАСПОРА В ПЕРВЫЕ ДЕСЯТИЛЕТИЯ XXI ВЕКА 272

Edik Minasyan – ACTIVITIES OF THE ALL-ARMENIAN FUNDS, NGOS AND CHARITABLE ORGANIZATIONS TO STRENGTHEN ARTSAKH-DIASPORA RELATIONS IN THE FIRST DECADES OF THE 21ST CENTURY. 273

Կարեն Մկրտչյան – ԱՐՏԱԳԱՂԹԸ ԵՎ ԿՐԹԱԿԱՆ ԽՆԴԻՐՆԵՐԸ ԻՐԱՆԻ ՀԱՅ ՀԱՄԱՅՆՔՈՒՄ 274

Карен Мкртчян – МИГРАЦИЯ И ПРОБЛЕМЫ ОБРАЗОВАНИЯ В АРМЯНСКОЙ ОБЩИНЕ ИРАНА. 280

Karen Mkrtchyan – MIGRATION AND EDUCATIONAL PROBLEMS IN THE ARMENIAN COMMUNITY OF IRAN. 281

ՄԱՆԿԱԿԱՐԺՈՒԹՅՈՒՆ / ПЕДАГОГИКА / PEDAGOGY

Սերի Հովհաննիսյան – ԿՐԹՈՒԹՅԱՆ ՆԿԱՏՄԱՄԲ ԱՐԺԵՔԱՅԻՆ ՄՈՏԵՑՈՒՄՆԵՐԸ՝ ԸՍՏ ՂԱԶԱՐՈՍ ԱՂԱՅԱՆԻ (ծննդյան 180-ամյակի առթիվ)..... 282

Мери Оганнисян – ЦЕННОСТНЫЕ ПОДХОДЫ К ОБРАЗОВАНИЮ ПО ГАЗАРОСУ АГАЯНУ. 289

Meri Hovhannisyan – VALUE-BASED APPROACHES TO EDUCATION BY GHAZAROS AGHAYAN. 289

ԳՐԱԽՈՍՈՒԹՅՈՒՆ / РЕЦЕНЗИЯ / REVIEW

Էրիկ Գալեգիսի ՄԻՆԱՍՅԱՆ, ՄԱՅՐԱՔԱՂԱՔ ԵՐԵՎԱՆԸ ՀՀ ԱՆԿԱԽՈՒԹՅԱՆ ՏԱՐԻՆԵՐԻՆ (1991-2018 թթ.), ԵՐԵՎԱՆ, ԵՊՀ ՀՐԱՏԱՐԱԿՉՈՒԹՅՈՒՆ, 2020, 380 էջ + 16 էջ ՆԵՐՂԻՐ:..... 291

ԲԱԶՄԱԿԱՍՏԱԿ ԱԶԳԱԳՐԱԳԵՏԻ ՆՈՐ ՄԵՆԱԳՐՈՒԹՅՈՒՆՆԵՐԸ 293

ՄԻՔԱՅԵԼ ԱՐՄԵՆԻ ՄԱԼԽԱՍՅԱՆ, ԺՈՂՈՎՐԴԱԳՐԱԿԱՆ ԳՈՐԾՆԹԱՑՆԵՐԸ ՀԱՅԱՍՏԱՆՈՒՄ 16-ՐԴ ԴԱՐՈՒՄ-17-ՐԴ ԴԱՐԻ ԱՌԱՋԻՆ ԿԵՍԻՆ, ԵՐԵՎԱՆ, ԵՊՀ ՀՐԱՏԱՐԱԿՉՈՒԹՅՈՒՆ, 2020, 300 էջ:..... 295

ՀԱՎԵՐԺԻ ՃԱՄՓՈՐԴՆԵՐ 298

ՄԱՀ ԻՄԱՑԵԱԼ. 2020 թ. ԱՐՑԱԽՅԱՆ ՊԱՏԵՐԱԶՄՈՒՄ ԱՆՄԱՀԱՑԱԾ՝ ԵՊՀ ՊԱՏՄՈՒԹՅԱՆ ՖԱԿՈՒԼՏԵՏԻ ՍԱՆԵՐԸ 315

ՏԵՂԵԿՈՒԹՅՈՒՆՆԵՐ ՀԵՂԻՆԱԿՆԵՐԻ ՄԱՍԻՆ 318

INFORMATION ABOUT THE AUTHORS 320

Ի ԳԻՏՈՒԹՅՈՒՆ ՀԵՂԻՆԱԿՆԵՐԻ 322

NOTICE FOR THE AUTHORS 322

Կարեն Մկրտչյան

ԱՐՏԱԳԱՂԹԸ ԵՎ ԿՐԹԱԿԱՆ ԽՆԴԻՐՆԵՐԸ ԻՐԱՆԻ ՀԱՅ ՀԱՄԱՅՆՔՈՒՄ

Հիմնաբառեր. Արտագաղթ, սփյուռք, ժողովրդագրական գործընթացներ, կրթական խնդիրներ, հայկական դպրոցներ, Իրանի հայ համայնք, կրոնական փոքրամասնություններ, համայնքային և թեմական կառույցներ:

ՄՈՒՏԸ

Մերձավոր և Միջին Արևելքի երկրների հայկական համայնքներում իր ուրույն տեղը և դերը զբաղեցնող Իրանի հայ համայնքը, 1979 թ. Իսլամական հեղափոխությունից հետո, այնուհետև Իրան-իրաքյան ութամյա պատերազմի տարիներին, ինչպես նաև ընդհուպ մինչև մեր օրերը Արևմուտքի կողմից պարբերաբար խստացվող պատժամիջոցների պայմաններում, ի թիվս սոցիալ-տնտեսական վնասների, առաջին հերթին ունեցել է ժողովրդագրական մեծ խնդիրներ:

Արտագաղթի հերթական ալիքը Իրանի հայ համայնքին պատուհասել է 2000-ական թթ. կեսերին և խոշոր տեմպերով շարունակվել մինչև 2010-ական թթ. կեսերը: Անշուշտ, դրանից հետո ևս նկատվել են նման միտումներ, սակայն գրանցվել է նաև որոշակի նվազում: Ըստ եուրոյան, արտագաղթի առաջին հարվածը ստացավ իրանահայ դպրոցը: Ժողովրդագրական ճգնաժամի հետևանքով փակվում են դպրոցներ, նվազում է երիտասարդության թիվը:

ՀԱՅ ՀԱՄԱՅՆՔԸ ԻՐԱՆԻ ԺՈՂՈՎՐԴԱԳՐԱԿԱՆ ԸՆԴՀԱՆՈՒՐ ԽՃԱՆԿԱՐՈՒՄ

Հայտնի է, որ իրանահայությունը սփյուռքի ընդգծված ազգային նկարագիր ունեցող համայնքներից մեկն է: Դրա պատճառներն են. իսլամական միջավայրը, Հայաստանի Հանրապետության հետ անմիջական սահմանի առկայությունը, համայնքային և թեմական կառույցների հետևողական աշխատանքը հայապահպանության ուղղությամբ, իրանական պետության կողմից համայնքի հանդեպ որոշակի բարյացակամ վերաբերմունքը:

Իրանի հայ համայնքին հուզող արդի խնդիրները առնչվում են տարածաշրջանի սոցիալ-տնտեսական և քաղաքական ընդհանուր մթնոլորտի թելադրած գերխնդիրների հետ, որոնք իրենց արտացոլումն են գտնում համայնքի առօրյա կյանքի տարբեր ոլորտների վրա¹:

1980-ական թթ. Իրանը լարել էր իր ուժերը Իրաքի դեմ ծանր ու հյուժիչ պատերազմը շարունակելու համար, որը ոչ միայն խլում էր հարյուր հազարավոր մարդկային կյանքեր, այլև վիթխարի նյութական վնասներ էր պատճառում Իրանին²: 17.000 հայ մասնակցեց Իրան-իրաքյան պատերազմին, որոնցից 260-ը զոհվեց³: Այս համատեքստում արժե նշել, որ պաշտոնական վիճակագրական տվյալներով՝ 1986 թ. Իրանի բնակչության էթնիկական կազմի թվաքանակի պատկերում հայերը կազմել են 250 հազար կամ 0,5 %-ը⁴:

Իրանում հայության թվաքանակի վերաբերյալ կարևոր է հաշվի առնել վիճակագրական հետևյալ տվյալները: Այսպես՝ 1851 թ. իրանահայերի թիվը կազմել է մոտ 20 հազար,

* Հոդվածը ներկայացվել է 25.11.2020 թ., իրատարակության երաշխավորվել՝ ՀՀ ԳԱԱ պատմության ինստիտուտի հայ գաղթօջախների և սփյուռքի պատմության բաժնի վարիչ, պ.գ.դ., պրոֆեսոր Գևորգ Ստեփանյանի կողմից (05.12.2020 թ.), ընդունվել տպագրության՝ 15.12.2020 թ.:

¹ Տե՛ս Բայբուրդյան Վ., Իրանի հայ համայնքը. արդի հիմնախնդիրներ, Ե., «Լուսակն» հրատ., 2013, էջ 12:

² Տե՛ս Բայբուրդյան Վ., Իրանի պատմություն, Ե., «Չանգակ-97» հրատ., 2005, էջ 730:

³ Տե՛ս Մանուկյան Մ., Իրանահայ գաղթօջախի առօրյան, Ե., Ա.հ., 2000, էջ 7:

⁴ Տե՛ս Փահլևանյան Օ., Շիրվանի Էությունը մահմեդականության համակարգում; Ե., Ա. հ., 2001, էջ 45:

1890 թ.՝ 80 հազար¹, 1979 թ.՝ 200 հազար², 2003 թ.՝ 80 հազար³, ներկայումս՝ շուրջ 50 հազար⁴: Կարելի է ասել, որ վերջին 40 տարում համայնքը նվազել է ավելի քան երեք անգամ: Հատկանշական է, որ մինչև Հայոց ցեղասպանությունը հայրենիքից դուրս ապրող հայության թիվը (չհաշված Ցարական և Օսմանյան կայսրությունների հայությունը) հասնում էր մոտ 200 հազարի, որից 100 հազարը բնակվում էր Իրանում, իսկ մնացածը՝ աշխարհի տարբեր երկրներում⁵:

2005 թ. դրությամբ Իրանի բնակչության թիվը կազմում էր ավելի քան 72 մլն կամ աշխարհի բնակչության (6,45 մլրդ) մոտ 1 %-ը: Իրանի բնակչությունն աշխարհում ամենաերիտասարդներից է. երկրում միջին տարիքը 23,5 է: Ընդ որում՝ մինչև 14 տարեկան՝ 28 %, 15-64՝ 67,2 %, 65 և ավելի բարձր տարիք՝ 4,8 %: Ընտանիքների 40 %-ը ունեն 6 և ավել երեխաներ: Արագ երիտասարդացմանը զուգահեռ բնակչությունը նաև արագ ուրբանիզացվում է: Եթե 1996 թ. քաղաքային բնակչությունը կազմում էր 61,5 %, ապա 2005 թ.՝ 69 %⁶:

Ազգային առումով Իրանի բնակչությունը խայտաբղետ է. բնակվում են 30-ի չափ ազգեր և ազգություններ: Որոշիչ տարրը պարսիկներն են՝ 51 %, թուրք-ազերիները՝ 17 %, քրդեր՝ 9 %, արաբներ՝ 3 %, ինչպես նաև՝ իրանալեզու խմբի մեջ մտնող լոռերը՝ մոտ 2 %, թուրքմենները՝ 2 %, բախտիարները, գիլանցիները և մազանդարանցիները՝ միասին 8 %, թալիշները, բելուջները և մի քանի այլ ժողովուրդներ⁷:

Ներկայումս ըստ ՄԱԿ-ի տվյալների՝ Իրանի բնակչությունը կազմում է շուրջ 83 մլն, որը կազմում է աշխարհի բնակչության 1,08 %-ը⁸: Բնակչության թվով երկիրը զբաղեցնում է 18-րդ տեղը աշխարհում: Հատկանշական է, որ բնակչության 75,5 %-ը կամ շուրջ 63 մլն մարդ քաղաքաբնակ է և միջին տարիքը կազմում է 32:

Ժողովրդագրական այսպիսի պատկեր ունեցող Իրանում իր գործունեությունն է ծավալում հայ համայնքը: 1970-ական թթ. արդեն իրանահայ համայնքը, Իրանի ժողովրդագրական գործընթացներին համահունչ և սփյուռքի մյուս համայնքների նման, դարձավ բացարձակապես քաղաքաբնակ և գերազանցապես թեիրանաբնակ: Տեղին է նշել, որ մինչ այդ համայնքի մի ստվար մասը եղել է գյուղաբնակ: Ըստ այդմ, կարելի է պայմանականորեն ասել, որ համայնքում այսօր առկա է մի կողմից աշխույժ գործունեություն ծավալող քաղաքաբնակ հայության որոշակի հատվածներ, իսկ մյուս կողմից առավել նոսրացած կամ վերացած երբեմնի հայկական բնակավայրեր, որոնց մասին միայն հիշողությունները կամ պատմական հուշարձաններն են վկայում: Այդպիսի վարչական տարածք է ներառում Ատրպատականի Հայոց հնամենի ու գործող թեմը, որտեղ առկա են մեծ քանակությամբ պատմամշակութային արժեք ներկայացնող կոթողներ:

Ներկայումս հայերը բնակվում են Թեհրանի արևելյան շրջանում՝ Նարմաք, Չարքեշ և Վահիդի թաղամասերում, որը հայկական միջավայրում հայտնի է որպես Սասուն թաղա-

¹ Տե՛ս Բաղայան Գ., Իրան. Հանրագիտարան, Եր., հեղինակային հրատ., 2011, էջ 397:

² Տե՛ս Դալլաքյան Կ., Հայ Սփյուռքի պատմություն (համառոտ ակնարկ), Եր., «Չանգակ-97» հրատ., 2004, էջ 194:

³ Տե՛ս «Հայ Սփյուռք» հանրագիտարան, Խմբ.՝ Հովհ. Այվազյան, Ա. Սարգսյան և ուրիշ., Եր., Հայկական հանրագիտարան հրատ., 2003, էջ 260:

⁴ Տե՛ս «Իրանի 60 հազարանոց հայկական համայնքը իր կնիքն ունի Իրանի կյանքում», 25.09.2014, <https://armenpress.am/arm/news/777670/irani-60-hazaranoc-haykakan-hamaynqy-ir-kniqn-uni-irani.html> (մուտք՝ 28.02.2020):

⁵ Տե՛ս Եղիապարյան Ա. և ուրիշներ, Հայրենիք-Սփյուռք հարաբերությունները 1918 թվականից մինչև մեր օրերը, Եր., ԵՊՀ հրատ., 2017, էջ 121:

⁶ Տե՛ս Թաղևոսյան Ռ., Իրան, (տեղեկատու), Եր., Հեղինակային հրատ., 2005, էջ 15:

⁷ Տե՛ս նույն տեղում, էջ 16:

⁸ Տե՛ս Iran Population (LIVE), retrieving data... <https://www.worldometers.info/world-population/iran-population/#:~:text=The%20current%20population%20of%20the,year%20according%20to%20UN%20data.> (մուտք՝ 28.02.2020):

մաս, Մաջիդիե՝ հայտնի որպես Չեյթոն, Թեհրանի կենտրոնական շրջանում՝ Սիրզայե Շիրազի (սախկին Նադիր Շահ)՝ հայտնի որպես Սարդարաբադ և Նադերի թաղամաս, որտեղ գտնվում է ՀՀ դեսպանությունը: Նշելի է, որ Հյուսիսային Թեհրանի հայաբնակ թաղամաս է Վանազը, որը երեք այլ գյուղերի հետ միասին հիմնել են XIX դ. սկզբին Ղարաղան, Քյազազ գավառներից տեղափոխված հայերը:

Հատկանշական է, որ ԻԻՀ-ի սահմանդրության 13-րդ հոդվածի համաձայն՝ «*Իրանցի զրադաշտականները, հրեաները և քրիստոնյաները ճանաչվում են միակ կրոնական փոքրամասնությունները: Նրանք օրենքի սահմաններում ապատ կերպով կարող են կատարելու իրենց ծեսերը, անձնական հարցերի լուծման և կրոնի ուսուցման ժամանակ առաջնորդվել սեփական օրենքներին համապատասխան*»¹: Հաշվի առնելով, որ նշված փոքրամասնությունների մեջ առավել մեծ համայնքը կազմում են հայերը երկրի խորհրդարանում նրանց հատկացված է երկու, իսկ ասորիներին, հրեաներին և զրադաշտականներին՝ յուրաքանչյուրին մեկական պատգամավորական տեղ²:

Իրանահայ լրագրող Ռուբիկ Մինասյանի կարծիքով՝ «*Երբեմնի 500 հազարանոց (կարծում ենք չափազանցված է այս թիվը և նույնիսկ մինչև 1979 թ. Իսլամական հեղափոխությունը այն կապմել է շուրջ 250.000 – Կ.Մ.), համայնքից լավագույն դեպքում մնացել են 40-50 հազարը: Համայնքը իհարկե կա, սակայն կշիռ ունեցող համայնք այլևս գոյություն չունի*»³: Ըստ Մինասյանի՝ իրանահայ համայնքը 2004-2014 թթ. ընթացքում զանգվածաբար արտագաղթել է արևմտյան երկրներ, ԱՄՆ: Ահա թե ինչու ըստ նրա՝ «...*Նույնիսկ պետությունը ուռճացնում է համայնքի թվերը, որպեսզի կարողանա բացատրել իրանահայ երկու պատգամավորի ներկայությունը երկրի խորհրդարանում: Եթե ներկայացվեն համայնքի իրական թվերը՝ մեկ պատգամավորից ավելի համայնքին չի հասնում*»⁴:

Ըստ իրանական պաշտոնական տեսակետի՝ «*Կրոնական փոքրամասնություններին*» տրվում են որոշ արտոնություններ: Իրանական կառավարությունը տարեկան 17.500 մլն ռիալ ընհանուր բյուջե (շուրջ 1 մլն 750 հազար դոլար) հատկացում է կրոնական փոքրամասնություններին: 2009 թ. հայ համայնքին հատկացված գումարի շուրջ վեճ առաջացավ ՀՀԴ կուսակցության և Հայ ժողովրդային միության միջև: Վերջինս առաջինին և փաստորեն նրան ենթակա Թեմական խորհրդին պատասխանատու նկատեց հայությանը հատկացված մոտ 782 հազար դոլարի անարդարացի բաշխման հարցում: ՀԺՄ-ի «Արաբս» պարբերականում տպագրվեցին մի շարք դատապարտող – բացահայտող հոդվածներ: Ինչևէ, նշենք, որ հատկացված գումարից 540 հազարը տրված էր հյուսիսային իրանահայությանը, մնացած 242 հազարը՝ հարավային իրանահայությանը: Համեմատության համար նշենք, որ ասորիներին հատկացվում է մոտ 300 հազար, հրեաներին՝ 300 հազար, զրադաշտականներին՝ 368 հազար ԱՄՆ դոլար:

Բոլոր դեպքերում համայնքի պահպանման ուղղությամբ պետության աջակցությունը առկա է: Թեհրանի թեմում քրիստոնեական դաստիարակության շրջանակներում կառավարության աջակցությամբ իրականացվում են հրատարակչական աշխատանքները⁵: Սակայն համայնքի առջև ծառայած հիմնական խնդիրները դպրոցների պահպանման ու համայնքապատկան հողերի կարգավիճակի հարցերն են:

ԿՐԹԱԿԱՆ ԽՆԴԻՐՆԵՐԸ ԻՐԱՆԻ ՀԱՅ ՀԱՄԱՅՆՔՈՒՄ

Հիրավի, Թեհրանը համարվում է համայնքի կենտրոնը: Այստեղ գործում են մոտ երեք տասնյակ կրթամշակութային կազմակերպություններ:

¹ “Constitution of the Islamic Republic of Iran”, p. 9, <https://www.wipo.int/edocs/lexdocs/laws/en/ir/ir001en.pdf>

² Տե՛ս նույն տեղում, էջ 17:

³ Մինասյան Ռուբիկ. «*Կշիռ ունեցող իրանահայ համայնք այլևս գոյություն չունի*», 24.03.2014, <https://www.panorama.am/am/news/2014/03/24/r-minasyan/325573> (մուտք՝ 27.05.2020):

⁴ Նույն տեղում:

⁵ Տե՛ս «Աստուծաշնչեան ընկերությունների ժողովը՝ Լիսբոնում», «Այիք» օրաթերթ, 20.01.2016, էջ 4:

2016 թ. Թեհրանի Հայոց թեմի Թեմական խորհրդի հանրային կապերի ղեկավար - Գասպար Ամիրխանյանի խոսքով՝ «Իրանի իշխանությունները սատարում են, որ հայ համայնքն իր ազատ կեանքն ունենայ: Համայնքը ներքին կեանքում ազատ է, մենք ունենք ակունքներ, դպրոցներ, եկեղեցիներ, նշում ենք մեր ազգային տոները: Անգամ իսլամական սուզի ամսիներին, որը համընկել է մեր ամանորի հետ, իշխանությունները թոյլատրել են մեր սրահներում խնջոյքներ կազմակերպել: Այդ առումով մենք գոհ ենք Իրանի իշխանություններից»¹:

Ըստ վիճակագրական տվյալների՝ դեռևս 1950-ական թվականներից Թեհրանի բոլոր թաղամասերում հայկական դպրոցներ կառուցվեցին: Արդեն 1970-ական թթ. գործում էին 36 հայկական դպրոցներ, որտեղ սովորում էր 14 հազար աշակերտ²: 1979 թ. Իսլամական հեղափոխությունից հետո կիրառված «փաթագի» («մաքրագործման») պետական քաղաքականության հետևանքով դպրոցի տնօրենների պաշտոններից հեռացվեցին տվյալ համայնքի ներկայացուցիչները: Իրենց պաշտոններում մնացին միայն քիչ թվով, այն էլ բնագիտական առարկաների մասնագետները:

Անցյալից ստանալով նշված «ժառանգությունը»՝ համայնքի առջև ծառայակալ Նոր մարտահրավեր՝ արտագաղթը, որն էլ իր ազդեցությունն է թողել կրթօջախների գործունեության վրա: Եթե 2005 թ. դրությամբ մայրաքաղաքում գործում էին համայնքի 35 դպրոցներից 28-ը՝ 7000 աշակերտով³, ապա 2016 թ. Թեհրանում գործում է 12 դպրոց, որտեղ սովորում է 3500 աշակերտ⁴: Փաստորեն, շուրջ 10 տարվա կտրվածքով արտագաղթի հետևանքով աշակերտության թիվը նվազել է 50%-ով, և փակվել կամ միավորվել է ևս 16 դպրոց: Եթե նախկինում կար այնպիսի դպրոց, որտեղ սովորում էր մինչև 1200 աշակերտ, ապա այսօր աշակերտների թիվը լավագույն դեպքում մոտ 200 է: Ըստ այդմ, առաջանում է դպրոցների կցման կամ միավորման հարցը:

Հիրավի, նշված խնդրով մտահոգ՝ 2014 թ. հոկտեմբերի 20-ին Նոր Զուղայի Ազգային կրթահամալիր այլցելած Ն.Ս.Օ.Տ.Տ. Արամ Ա Մեծի Տանն Կիլիկիո Կաթողիկոսն իր օրհնության խոսքում ընդգծել է. «...Սփիւռքի դժուար պայմաններուն մէջ ջարդերէն յետոյ եկեղեցւոյ կողքին, հայ դպրոցը դարձաւ մեր գոյութեան ամրոցը: Հետեւաբար ամէն զոհողութիւն պէտք է կատարել հայ դպրոցը պահելու համար ու կենսունակ իր առաքելութեամբ»⁵: Վեհափառ Հայրապետի այցելության ընթացքում տեղի է ունեցել Ս. Ամենափրկիչ վանքի վերանորոգված գրադարանի բացումը⁶, իսկ հոկտեմբերի 22-ին Վեհափառ Հայրապետն այցելել է Մարի Մանուկյան և Կյուլպենկյան վարժարաններ՝ իր հայրական հորդորն ուղղելով աշակերտներին և ուսուցչական կազմին:

Համայնքում դպրոցների փակման խնդիրը դարձել է ինչպես հայաստանյան, այպես էլ իրանահայ հասարակական քննարկումների թեման: 2009 թ. փակվեց Հայ Կաթողիկե համայնքին պատկանող «Ալիշան» դպրոցը⁷: Համայնքի «Հայելի» կայքը 2012 թ. հունիսի 11-

¹ «Թեհրանի հայկական դպրոցներում աշակերտների թիւը պակսում է», 12.04.2016, <http://tehranprelacy.com/9-content-hy/news-hy/386-2016041201> (մուտք՝ 27.05.2020):

² Տէ՛ս Թաղևոյան Ռ., Իրան, էջ 62:

³ Տէ՛ս նոյն տեղում:

⁴ Տէ՛ս «Թեհրանի հայկական դպրոցներում աշակերտների թիւը պակսում է», 12.04.2016, <http://tehranprelacy.com/9-content-hy/news-hy/386-2016041201> (մուտք՝ 27.05.2020):

⁵ «Արամ Ա. Կաթողիկոսի ներկայութեամբ հայ դպրոցի ու հայ մշակոյթի դերը դարձեալ շեշտուեցաւ», «Հասկ» պաշտօնական ամսագիր Կաթողիկոսութեան Հայոց Մեծի Տանն Կիլիկիոյ, ՁԳ. Տարի 2014, հոկտեմբեր, թիւ 10, էջ 956:

⁶ Տէ՛ս «Ս. Ամենափրկչեան վանքի «Ս. Ներսէս Շնորհալի» անւան գրադարանի վերաբացում», «Նոր Զուղա» տեղակատու Սպահանի Հայոց թեմի, ԺԲ տարի, թիւ 104, սեպտեմբեր - հոկտեմբեր, 2014, էջ 6:

⁷ Թեհրանի Հայ Կաթողիկե համայնքի Ս. Գրիգոր Լուսավորիչ եկեղեցին կառուցվել է 1950-1954 թթ., օծվել է Գրիգոր Պետրոս ԺԵ Կարդինալի և եպիսկոպոս Հովհաննէս Սկրտիչ Աբգարյանի ձեռամբ: 1962 թ. ապրիլի 23-ին Թեհրան այցելած կարդինալ Աղաջանյանի պատվին Թեհրանում Վատիկանի դեսպան Արիհապատիվ Ռիկկին պաշտոնական ընդունելություն է կազմակերպում և նշում Թեհրանում Հայ Կաթողիկե դպրոց ունենալու անհրաժեշտությունը: Բարերարներ Փուլցեղյանը, Չիլոյանը և Պետրոսյանը Ս. Գրիգոր Լուսավորիչ եկեղեցուն

ին, 12-ին և 13-ին հրապարակել է երեք գրություն Թեհրանի Մարի Մանուկյան դպրոցի իրավիճակի մասին: Դրանցից վերջինում ներկայացված է նաև թեմի Կրթական խորհրդից ստացված տեղեկությունը, որտեղ համատեղ լուծում գտնելու մասին է խոսվում: Սակայն դրան հաջորդեց լրատվամիջոցներում հրապարակված «Դաշնակցականները Իրանում փորձում են խլել Զ.Բ.Ը.Մ.-ի աշխատող դպրոցները» թեմայով նամակը ուսուցչուհի Ա. Յովհաննիսյանի անունից¹: Այդտեղ առկա են մեղադրանքներ առ այն, որ ՀՀԿ կուսակցության նպատակը միմիայն դպրոցներն իրեն ենթակա դարձնելն է: Մինչդեռ անհրաժեշտ էր ցույց տալ, որ փակման հիմնական պատճառը եղել է արտագաղթը:

Իրանահայ դպրոցների հաջորդ մարտահրավերն այն է, որ բարձր դասարաններում ոչ-հայկական դպրոցներ հոսքի պատճառով կրկին նվազում է աշակերտության առանց այդ էլ նոսրացած թիվը: Դա պայմանավորված է այն հանգամանքով, որ բուհերի ընդունելության քննություններում պահանջվում է պարսկերեն լեզվի իմացության քննություն: Այդ պատճառով սովորողները զրկվում են շաբաթական մի քանի ժամ հայերենի դասաժամերից և կարևորը՝ հայկական դպրոցի միջավայրից²:

Թեհրանում գործող երեք օրիորդաց միջնակարգ (ավագ) դպրոցները, կամ նրանցից երկուսը՝ Մարի Մանուկյանը և Թովմասյանը, նման իրավիճակի առջև են կանգնած ու տարեց տարի նվազում է երեխաների թիվը (դա այն դեպքում, երբ արտագաղթի հոսքը, ժամանակավոր նվազել է 2011-2012 թթ.):

Ըստ Կրթական խորհրդի՝ 2009-2010 ուսումնական տարում օրիորդաց միջնակարգ երեք դպրոցներում առաջին միջնակարգ հաճախած 199 երեխաներից հաջորդ տարի երկրորդ միջնակարգը շարունակել են միայն 159-ը, իսկ երրորդը՝ 148-ը: 2010-2011 ուստարում առաջին միջնակարգը ավարտած 141 աղջիկներից, հաջորդ ուստարին այդ երեք դպրոցում շարունակել են ընդամենը 105-ը: Ի դեպ, այդ թվում՝ Մարի Մանուկյան դպրոցը լթածների թիվը կազմում է 29, Թովմասյան դպրոցինը՝ 17, որոնց մի մասը, տեղափոխվել է «Մարիամ» հաստատության դպրոցը, ուր աշակերտների թիվն աճել է 10-ով: Իսկ մնացյալը կարելի է ասել լթել են հայկական դպրոցը:

Ակնհայտ է, որ նման պայմաններում համայնքում առկա է որոշակի հուսալքում: Դրանով հանդերձ, ջանք է գործադրվում, որ կրթօջախները նոր մեթոդներով զինվեն: Մյուս կողմից փաստենք, որ Թեհրանի հայկական դպրոցները գրականության, որակյալ ուսուցիչների պակաս չունեն, քանի որ համայնքը տարիների կուտակած փորձ ունի: 2010-ական թթ. ՀՀ սփյուռքի նախարարությունը համայնքի դպրոցներին տրամադրել է դասագրքեր, կազմակերպել ուսուցիչների վերապատրաստում Հայաստանում: 2009 թ. 9 ուսուցիչ վերապատրաստում է անցել հայրենիքում³: 2012 թ. ուսուցիչների վերապատրաստման ծրագրին մասնակցել է 5 ուսուցիչ Իրանից⁴, իսկ 2015 թ. նշված ծրագրին մասնակցել են ուսուցիչներ Աբխազիայից՝ 1, ԱՄՆ-ից՝ 11, Բելառուսից՝ 2, Բրազիլիայից՝ 1, Էստոնիայից՝ 2, Թուրքիայից՝ 2, Իրանից՝ 6, Լիբանանից՝ 3, Կանադայից՝ 1, Շվեդիայից՝ 1, Շվեյցարիայից՝ 1, ՌԴ-ից՝ 10,

կից գնում են եռահարկ շենք և հատկացնում դպրոցին՝ այն անվանակոչելով «Ալիշան»: Ուսումնադաստիարակչության նախարարությունը տալիս է արտոնություն, ըստ որի միայն հայ աշակերտները կարող էին արձանագրվել: Դպրոցի ծաղկուն շրջանը եղել է 1983-1984 ուսումնական տարին՝ 470 աշակերտով: Դպրոցում 47 տարում սովորել են 13.111 հայորդի: Հայ աշակերտության նվազման պատճառով դադարել է դպրոցի աշխատանքը 2009-2010 ուսումնական տարում: Առավել մանրամասն տես՝ Յովիկ Մինասեան, Ակնարկ - Իրանի Հայ Կաթողիկե «Ալիշան» դպրոցը, «Ալիք» օրաթերթ 06.12.2016:

¹ Տե՛ս «Դաշնակցականները Իրանում փորձում են խլել Զ.Բ.Ը.Մ.-ի աշխատող դպրոցները», <https://hetq.am/hy/article/15938>, 26.06.2012 (մուտք՝ 26.04.2020):

² Տե՛ս Պետրոսեան Ս., Հայկական դպրոցն Իրանում մարտահրավերի առջև է կանգնած, <https://hetq.am/hy/article/16187>, 02.07.2012 (մուտք՝ 26.05.2020):

³ Իրանի հայ համայնքի մտահոգիչ խնդիրն արտագաղթն է, 13.07.2010, <https://armenpress.am/arm-news/611605/arm/> (մուտք՝ 26.05.2020):

⁴ Սփյուռքահայ ուսուցիչների մեկամսյա վերապատրաստման ծրագրին մասնակցում է 12 երկրի 75 ներկայացուցիչ, <https://hraparak.am/post/591fc32ae3d84d0d37fdf28e>, 09.07.2012 (մուտք՝ 26.05.2020):

Սիրիայից՝ 14, Վրաստանից՝ 7 և Ուկրաինայից՝ 1¹: Ակնհայտ է, որ հայության տեղաբաշխման թվի համեմատության դեպքում Իրանից վերապատրաստման ծրագրին մասնակցությունը բարձր ցուցանիշ է ունեցել:

Կրթական հաջորդ խնդիրն այն է, որ անհրաժեշտ է ձեռնարկել այնպիսի քայլեր, որ գիտությունն ու կրթությունը երիտասարդության համար ձգող ուժ լինեն: Համայնքում սահմանափակ է ուսանողների թիվը: Այդ մասին է վկայում այն, որ միայն Սպահանի հայ համայնքից 2013-2014 ուստարում բուհերի մագիստրատուրա են ընդունվել 6², իսկ բակալավր, մագիստրատուրա, ասպիրանտուրա են ընդունվել ընդամենը 37 սովորող³:

Արտագաղթի և ոչ հայկական դպրոցներ հաճախող աշակերտության մասին հարցերը քննարկել է 2015 թ. հոկտեմբերի 27-ին Թեհրանի հայոց թեմի Պատգամավորական ժողովը՝ իր գումարած 22-րդ նիստի ընթացքում⁴:

Կրթական որոշ սուր խնդիրներին անդրադարձել է Իսլամական խորհրդարանի պատգամավոր Կարեն Խանլարյանը 2017 թ. ապրիլի 17-ին իրանական jamejamonline.ir լրատվական կայքում հրապարակված հարցազրույցում: Նրա խոսքով՝ «Անցեալ երկու տարիների ընթացքում (2015-2017 թթ. - Կ.Ս.) չի վճարել իրանահայությանը յատկացված կրթական փուլեր: Սա այն դեպքում, երբ մեր դպրոցներում պաշտույն է հիմնական վերանորոգումների անհրաժեշտությունը»⁵: Նախկինում բարերարների միջոցով Թեհրանում կառուցված 16 դպրոց ներկայումս հիմնանորոգման կարիք է զգում: Այսպիսով, կրթական բնագավառում առկա խնդիրները լուծելու համար պահանջվում է համայնքի պատասխանատուներից հետևողական աշխատանք պետական կառույցների հետ:

Մյուս կողմից, համայնքի կրթական աշխույժ կյանքի մասին է խոսում տեղական և միջազգային նշանակության մրցույթներին աշակերտների հաջող մասնակցությունը, փորձի փոխանակումը և դպրոցների հոբելյանների նշումը:

Կրթական բարձր մակարդակի մասին է վկայում այն, որ Նոր Զուղայի հայոց ազգային «Քանանյան» աղջկանց ուղեցույց և միջնակարգ դպրոցը 2013-2014 ուստարում Սպահան քաղաքի ուսումնադաստիարակության հիմնարկի կողմից 3-րդ շրջանի մակարդակում ճանաչվել է որպես «Լավագույն դպրոց»⁶: Այդ ծրագրին իրականացնում է Իրանի կրթադաստիարակչության նախարարությունը: Ի դեպ, 2012-2013 ուստարվա ընթացքում ունեցած հաջողությունների համար էլ Թավրիզի Հայոց «Թամարեան-Սահակեան» դպրոցն է ստացել կրթական բարձր մակարդակը հաստատող գնահատագրեր⁷:

Ուշագրավ է, որ ՀՀ Կրթության և գիտության նախարարության կողմից 2013 թ. օգոստոսին կազմակերպված Հայագիտական համահայկական 6-րդ օլիմպիադայի ընթացքում Հայ Առաքելական եկեղեցու պատմությունն առարկայի մրցույթին մասնակցել են «Քանանյան» աղջկանց և «Կատարինյան» տղայոց դպրոցների աշակերտները: Իրանահայ պատվիրակության 13 աշակերտ, մրցելով օլիմպիադային մասնակից ութ երկրի 150 աշակերտի հետ, ստացել են 8 դիպլոմ և 22 պատվոգիր ու շնորհակալագիր՝ արդյունքում ճանաչվելով

¹ Աշոտյանը կոչ է արել սիյունաբանայ ուսուցիչներին օգտվել հայալեզու էլեկտրոնային պաշարներից, 01.07.2015, <http://www.irates.am/hy%C3%A2%E2%82%AC%C3%A2%E2%82%AC/1435761535>

² Տե՛ս «Ուսանողների գնահատում Ս. Ամենափրկչեան վանքում», «Նոր Զուղա» տեղակատու Սպահանի Հայոց թեմի, ԺԲ տարի, թիվ 102, մայիս - հունիս, 2014, էջ 11:

³ Տե՛ս «Ն.Զ. Հայ Մ.Ս. «Արարատ» միությունն ուսանողական միաբերության վարչությունն ընդունեց՝ համայնքի նորամուտ ուսանողներին», «Նոր Զուղա» տեղակատու Սպահանի Հայոց թեմի, ԺԲ տարի, թիվ 102, մայիս - հունիս, 2014, էջ 19:

⁴ Տե՛ս «Թեհրանի հայոց թեմի Պատգամավորական ժողով», «Ալիք» օրաթերթ, 12.11.2015:

⁵ Խանլարյան Կ., «Անհրաժեշտ է վճարել իրանահայությանը յատկացված կրթական փուլեր», «Ալիք» օրաթերթ, 17.04.2017:

⁶ Տե՛ս «Քանանեան» աղջ. Դպրոցը՝ «Լավագույն դպրոց», «Նոր Զուղա» տեղակատու Սպահանի Հայոց թեմի, ԺԲ տարի, թիվ 102, մայիս - հունիս, 2014, էջ 17:

⁷ Տե՛ս «Թավրիզի հայոց ազգային դպրոցը գնահատագրեր է ստանում», «Ալիք» օրաթերթ, 07.12.2013:

որպես մրցույթի հաղթող խումբ: Փաստորեն, դպրոցում ամուր հիմքերի վրա է դրված հայագիտական առարկաների իմացությունը: Ըստ այդմ, հայկական ինքնուրույնը խարսխված է համայնքային կյանքի կազմակերպման ավանդական և վստահելի կառուցակարգերի վրա:

Կրթական փորձի փոխանակման շրջանակներում 2014 թ. փետրվարի 3-ին Սպահան նահանգի Ուսումնադաստիարակչական գերատեսչության ներկայացուցիչների ուղեկցությամբ Նոր Զուղայի հայոց ազգային կրթահամալիր են այցելել Դանիայի բուհերի մակաբարժական ֆակուլտետների 50 ուսանող, որոնք իրենց փորձաշրջանն են անցել Իրանում¹:

Համայնքում կրթօջախների դերի կարևորումը և հանրահռչակումը օրինակելի ավանդույթ է դարձել, հատկապես, երբ նշվում է որևէ դպրոցի հիմնադրման հոբելյանը: 2017 թ. փետրվարի 17-ին տեղի է ունեցել «Հայոց ազգային Արաքս դպրոցի 60 ամեայ ուղին» գրքի շնորհանդեսը, որի հեղինակն է Իռեն Աբևուսյանը²:

ԱՄՓՈՓՈՒՄ

Արտագաղթի հետևանքով մեծ վնաս է կրել իրանահայ դպրոցը և կրթական համակարգն առհասարակ: Մեծ թվով դպրոցների փակումը աշակերտության թվի նվազման ուղիղ ազդեցությունն է համայնքի կյանքում: 2005-2016 ուսումնական տարիներին աշակերտության թվի 50%-ով նվազումը ցույց է տալիս, որ տասնյակ դպրոցների փակումը կամ միավորումը ինչ որ տեղ անխուսափելի էր համայնքում, քանի որ պահելը կլիներ ծախսաշատ և լրացուցիչ ֆինանսական միջոցներ կպահանջեր:

Հայության ճնշող մեծամասնությունը՝ ընդհուպ մինչև 80-85 %-ը բնակվում է Թեհրանում, մինչդեռ ՀՀ սահմանակից Արևելյան Ատրպատական նահանգում հայության թիվը չի գերազանցում 1500-ը:

Հիմք ունենալով այն փաստը, որ 2016 թ. դրությամբ Թեհրանում սովորում է 3500 աշակերտ, կարելի է կանխատեսել, որ ոչ հեռու ապագայում զգալիորեն կնվազի հայության թիվը նաև մայրաքաղաքում:

Հայկական դպրոցները ներդաշնակ են համաիրանական կրթական պահանջներին և չափանիշներին՝ պահպանելով ազգային դիմագիծը:

Карен Мкртчян, МИГРАЦИЯ И ПРОБЛЕМЫ ОБРАЗОВАНИЯ В АРМЯНСКОЙ ОБЩИНЕ ИРАНА. Из-за миграции армянского населения ирано-армянская школа и система образования в целом сильно пострадали. Закрытие большого количества школ является прямым следствием упадка жизни в общине. Снижение набора учащихся на 50% в 2005-2016 гг. указывает на то, что закрытие или воссоединение десятков школ в общине было неизбежно, поскольку их поддержание было бы дорогостоящим и потребовало бы дополнительного финансирования.

Исходя из того, что в 2016 г. в Тегеране обучалось 3500 учеников, можно прогнозировать, что в ближайшем будущем количество армян в столице, где сосредоточено большинство армян Ирана, значительно уменьшится.

Получение награды «Лучшая школа» означает, что армянские школы соответствуют общеиранским образовательным требованиям и стандартам.

Следует отметить, что армянская община Ирана, массово эмигрировав в 2004-2014 гг. в страны Запада и США, пополнила ряды местных армянских общин.

¹ Տե՛ս «Դանիայից ժամանած ուսանողների այցը Նոր Զուղայի Հայոց ազգային կրթահամալիր», Տեղեկատու Սպահանի Հայոց թեմի, ԺԲ տարի, թիվ 100, Յունուար-փետրվար 2014, էջ 26:

² Տե՛ս «Տեղի ունեցաւ «Արաքս» դպրոցի հիմնադրման 60-ամեակին նվիրւած գրքի շնորհանդեսը», «Ալիք» օրաթերթ, 18.02.2017:

Ключевые слова: эмиграция, диаспора, демографические процессы, вопросы образования, армянские школы, армянская община Ирана, религиозные меньшинства, общинно-епархиальные структуры.

Karen Mkrtchyan, MIGRATION AND EDUCATIONAL PROBLEMS IN THE ARMENIAN COMMUNITY OF IRAN. As a result of migration, the Iranian-Armenian school and the education system in general have suffered a lot. The closure of a large number of schools is a direct impact of declining student life in the community. The 50% decrease in the number of students in the 2005-2016 school year indicates that the closure or reunification of dozens of schools was inevitable somewhere in the community, as maintaining it would be costly and would require additional funding.

Based on the fact that in 2016 there are 3,500 pupil in Tehran, and it can be predicted that in the near future the number of Armenians in the capital, where most of the Armenians in Iran are concentrated, will significantly decrease.

Winning the "Best School" award means that Armenian schools are in line with all-Iranian educational requirements and standards.

It should be noted that the Iranian-Armenian community in 2004-2014 mass migrating to Western countries and the United States joined the ranks of local Armenian communities.

Key words: migration, diaspora, demographic processes, educational issues, Armenian schools, Armenian community of Iran, religious minorities, community and diocesan structures.